

ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հոկտեմբերի 7-ին, երկուշաբթի օրը, ժամը 1-ին, հոգևոր ճեմարանի հանդիսասրահում, ի ներկայության ճեմարանի դասախոսական կազմի, ուսանողության, Մայր Աթոռի միաբանության և պաշտոնեության, տեղի ունեցավ 1967—68 ուսումնական տարեշրջանի հոգևոր ճեմարանի շրջանավարտներ Վրեժ սրկ. Ներսիսյանի, Սասուն սրկ. Վարդանյանի և Հովսեփ սրկ. Հակոբյանի ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը և վկայականների հանձնումը:

Հանդիսությանը նախագահում էր Մայր տաճարի լուսարարապետ գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանը:

Քննիչ հանձնաժողովի նախագահ և հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը հայտնելուց հետո, թե քննիչ հանձնաժողովը երկու գերազանց և մեկ բավարար գնահատելով ներկայացված գրավոր աշխատանքները, միջնորդել է հոգևոր ճեմարանի տեսչությանը թույլատրելու շրջանավարտ սարկավագներին ներկայանալ բանավոր պաշտպանության, համառոտակի ներկաներին ծանոթացրեց ներկայացված աշխատանքների առավելություններին ու թերություններին:

Ապա բանավոր պաշտպանության համար խոսք տրվեց շրջանավարտ բարեշնորհ սարկավագներին: Նրանցից յուրաքանչյուրը համառոտակի ներկայացնելով իր ավարտաճառի նյութը, օգտագործած աղբյուրները, պատասխանեց հանձնաժողովի հարցերին:

1. Բարեշնորհ Սասուն սրկ. Վարդանյանի նյութն էր «Գրիգոր Նարեկացի»՝ բաղկացած առաջաբանից և մեկ գլխից՝ 10 ենթաբաժանումներով (109 մեքենագրված էջ):

2. Բարեշնորհ Վրեժ սրկ. Ներսիսյանի ավարտաճառի նյութն էր «Եսայի մարգարեն»՝ բաղկացած ներածությունից և յոթ մասերից (71 էջ): Այս երկու ավարտաճառերը գնահատվեցին գերազանց:

3. Բարեշնորհ Հովսեփ սրկ. Հակոբյանի նյութն էր «Ասի Ե ժողովը»՝ բաղկացած ներածությունից և երկու մասերից (55 էջ): Աշխատությունը գնահատվեց բավարար:

Վերջում հոգևոր ճեմարանի տեսուչ հոգ. տ. Ներսես ծ. վրդ. Պոզապալյանը ամփոփելուց հետո ավարտաճառերի պաշտպանության արդյունքները՝ խնդրեց հանդեսը նախագահող գեր. տ. Հայկազուն արքեպ. Աբրահամյանին շրջանավարտներին հանձնել վկայականները, որը կատարվեց ներկաների բուռն ծափահարություններ ներքո:

Վկայականների հանձնումից հետո հոգ. տեսուչ հայր սուրբը շրջանավարտ սարկավագներին առաջնորդեց Վեհարան, ուր նրանք ստացան Վեհափառ Հայրապետի օրհնությունները և բարի մաղթանքները: Այս առթիվ Վեհափառ Հայրապետը նրանց նվիրեց նաև մեկական ձեռքի ժամացույց:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունն էլ իր հերթին շնորհավորելով նորավարտ բարեշնորհ սարկավագներին, մաղթում է, որպեսզի նրանք դառնան հայ եկեղեցու սրբազան անդաստանի արժանավոր, բարի մշակներ և իրենց ժողովրդին նվիրված անձնադիր հովիվներ: